ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի միջև

ք. Երևան «15» մարտի, 2022 թ.

ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ Կազմակերպություն) և Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին), միասին (Կողմեր).

Ղեկավարվելով սննդամթերքի անվտանգության ռիսկերի կառավարման և ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման անհրաժեշտությամբ,

հիմք ընդունելով մարդու առողջության համար սննդամթերքի հնարավոր վնասակար ազդեցության պաշտպանության առաքելությունը,

կարևորելով ռիսկայնության հիման վրա պետական վերահսկողության պլանավորումը և իրականացումը,

բարձր գնահատելով սննդամթերքի անվտանգության բնագավառում Կողմերի արդյունավետ համագործակցության նշանակությունը,

կնքեցին համագործակցության սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Համագործակցության նպատակը

Սույնով կողմերը համաձայնում են միավորել իրենց ջանքերը սննդամթերքի անվտանգության բնագավառում ռիսկերի կառավարման ուղղությամբ:

2. Համագործակցության ուղղությունները

Սույն Հուշագրի շրջանակում Կողմերը սննդամթերքի անվտանգության բնագավառում ռիսկերի կառավարման նպատակով համագործակցում են հետևյալ ուղղություններով.

2.1. Օրենքով սահմանված կարգով ստուգումներ կատարելու նպատակով սննդամթերքի անվտանգության բնագավառում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացման համար գիտական խորհրդատվության տրամադրում:

2.2. Ռիսկերի կառավարման շրջանակներում գիտելիքների բարձրացման նպատակով վերապատրաստման ծրագրի մշակում, կազմակերպում և իրականացում:

2.3. Ռիսկերի կառավարման գործընթացը արդյունավետ կազմակերպելու նպատակով մասնագիտական խորհրդատվության տրամադրում:

2.4. Սննդամթերքի անվտանգության բնագավառի ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում:

2.5. Համատեղ այլ գործողությունների, միջոցառումների իրականացում՝ ուղղված Սննդամթերքի անվտանգության բնագավառի ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

3.2. Կազմակերպությունը.

3.2.1. Աջակցում է սննդամթերքի անվտանգության բնագավառում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացմանը:

3.2.2. Աջակցում է Տեսչական մարմնին՝ վերապատրաստման ծրագրի մշակման, կազմակերպման և իրականացման գործում:

3.2.3. Տեսչական մարմնի դիմելու դեպքում տրամադրում է մասնագիտական խորհրդատվության:

3.2.4. Տրամադրում է սննդամթերքի անվտանգության բնագավառի ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն՝ իր իրավասությունների և գործառույթների շրջանակներում:

3.3 Տեսչական մարմինը.

3.3.1. Սննդամթերքի անվտանգության բնագավառում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացման ընթացքում աջակցություն ստանալու նպատակով դիմում է Կազմակերպությանը:

3.3.2. Կատարում է վերապատրաստման ենթակա մասնագետների կարողությունների գնահատում, Կազմակերպության հետ համատեղ վերապատրաստման ծրագրի մշակում, կազմակերպում և իրականացում:

3.3.3. Տրամադրում է սննդամթերքի անվտանգության բնագավառի ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն՝ իր իրավասությունների և գործառույթների շրջանակներում:

3.3.4. Կազմակերպությունից հայցում է մասնագիտական խորհրդատվություն:

4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

4.2. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն հուշագրի և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն հուշագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն հուշագիրը կնքելուց հետո, և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը,պատերազմը, ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելը,քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը

շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն հուշագրի դրույթներից բխող աշխատանքների բնույթի, ծավալի և այլ անհրաժեշտ գործողությունների հստակեցումը Կողմերը կկատարեն սույն հուշագրի շրջանակում առանձին փաստաթղթեր կազմելու, հաստատելու միջոցով:

7.2. Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

7.3. Սույն հուշագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

7.4. Սույն հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի հասցեները, ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին
Հասցե՝ ք. Երևան	հասցե՝ ք.Երևան 0051,
Աբովյան փող., 68	Կոմիտասի պող., 49/2
Տնօրեն	Ղեկավար՝
Լիլիթ Սահակյան	Գեորգի Ավետիսյան
ստորագրություն, կնիք	ստորագրություն, կնիք